

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԱՄՍԱԳՐԵՐՈՒՄ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ (1896—1975)

1975 թվականի վերջերին Լոնդոնի **Լուզաք** հրատարակչական ընկերությունը լույս է ընծայել Մայր Աթոռի երիտասարդ միաբան և աստվածաբանական գիտությունների դոկտոր Վրեժ սարկավագ Ներսիսյանի՝ 1896—1975 թթ. «Արևմտյան ամսագրերում հայագիտության ուսումնասիրությունների մատենագիտական ցուցակ» աշխատությունը, անգլերեն լեզվով:

Վրեժ. սրկ. Ներսիսյանը ծնվել է 1948 թվականին Թեհրանում: Հոգևոր ճեմարանի Ա. լսարան է ընդունվել 1965 թվականին և ճեմարանն ավարտել 1968 թվականին «գերազանց» գնահատականով: Նրա ավարտական թեման է եղել՝ «Եսայի մարգարեն, գրքի բովանդակությունը, կրոնական ու պատմական նշանակությունը»:

1967 թվականին սարկավագ է ձեռնադրվել Մայր Աթոռում՝ ձեռամբ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանի:

1968 թվականի աշնանը, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ և միջնորդությամբ, Վրեժ սարկավագն ընդունվել է Լոնդոնի համալսարանի Կինգզ կոլեջի աստվածաբանական ինստիտուտ և այն ավարտել 1973 թվականին՝ «Աստվածաբանության պսակավոր»-ի կոչումով:

Ինստիտուտն ավարտելուց հետո Վրեժ սարկավագն իր ուսումը շարունակել է նույն համալսարանի բյուզանդագիտական ինս-

տիտուտում, ուր և գրել է իր դոկտորական թեզը, որի թեման է եղել՝ «Թոնդրակյան-Պավղիկյան շարժումը. կրոնական-պատմական ուսումնասիրություն աղանդի ծագման և զարգացման պատմության մասին, Հայաստանյայց եկեղեցում Թ—ԺԱ դարերում», 250 էջ:

Վրեժ սարկավագի դոկտորական թեզի պաշտպանությունը տեղի է ունեցել 1975 թվականի սեպտեմբերի 4-ին Լոնդոնի համալսարանում: Սույն թեզի մասնավոր հաջողության և կարևորության համար նրան իրավունք է տրվել այն հրապարակել: Հոլանդական մի հրատարակչություն ընդունել է այն հրատարակության համար:

1975 թվականի վերջերին անգլիական արևելագիտական մի հրատարակչություն հրատարակել է Վրեժ սարկավագի վերոհիշյալ «Արևմտյան ամսագրերում հայագիտական ուսումնասիրությունների մատենագիտական ցուցակ» աշխատությունը:

Սույն աշխատության նախաբանը գրել է Լոնդոնի համալսարանի կովկասագիտության պրոֆ. Դ. Մ. Լանգը: Նախաբանին Վրեժ սարկավագը կցել է բովանդակալից մի հառաջաբան, ուր ներկայացրել է 1896—1975 թվականներին հայագիտության ընթացքն ու զարգացումը Եվրոպայում՝ հատկապես ծանրանալով կրոնա-պատմական ուսումնասիրությունների վրա: Սույն աշխատությունը գրելիս հեղինակն օգտվել է Լոնդոնի և Եվրոպայի գրադարաններում գտնվող հայագիտական հարուստ գրականությունից:

Աշխատությունը բաղկանում է 95 էջից և 8 ենթագլուխներից.

1. Կրոն, եկեղեցի, վանականություն, աստվածաբանություն.
2. Պատմություն.
3. Դրամագիտություն.
4. Բնագրեր, ժողովրդական բանահյուսություն.
5. Ձեռագրեր, ձեռագրագիտություն.
6. Բանասիրություն, լեզվաբանություն.
7. Ճարտարապետություն, հնագիտություն, արվեստներ, մանրանկարչություն, երաժշտություն.
8. Հայկական ափյուռք:

Մատենագիտական սույն ցուցակի պատրաստման գլխավոր նպատակն է եղել հավաքել և ընդհանրապես հայագիտությամբ զբաղվող օտար գիտնականներին ու գիտական հաստատություններին մատչելի դարձնել եվրոպական լեզուներով լույս տեսած հայագիտական ուսումնասիրությունների մատենագիտությունը մեկ հատորով:

Աստվածաբանության դոկտոր և Մայր Աթոռի միաբան Վրեժ սարկավագի սույն կարևոր ու անհրաժեշտ աշխատությունն անկասկած կօգնի և կհեշտացնի աշխատանքը օտար բոլոր այն հայագետների, որոնք գիտական բարեխղճությամբ և լրջությամբ զբաղվելու են հայ մշակույթի տարբեր բնագավառների ուսումնասիրությամբ: Այս ուղղությամբ շնորհակալ և գնահատելի աշխատանք է կատարել Վրեժ սրկ. Ներսիսյանը:

ՍԱՐԳԻՍ ՍՐԿ. ՍԱՐԳՍՅԱՆ